ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

« 26 » հունվարի 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ թիվ 040662-2
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետներ Ա. Ենոքյանս և Հ. Հակոբյանս՝ վերանայելով Միքայել Մնացականի Աղաբաբյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետներ Ա. Ենոքյանի և Հ. Հակոբյանի 11.01.2021 թվականի թիվ 040662 որոշմամբ ֆիզիկական անձ Միքայել Մնացականի Աղաբաբյանի (ՀՎՀՀ՝ 40056978, Ն/Ք՝ 004988432, հասցե՝ ք. Երևան Սայաթ-Նովա 33 շ. 84 բն.) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա կիրառվել է արգելանք՝ 64.412.540 դրամի չափով:

Ֆիզիկական անձ Միքայել Մնացականի Աղաբաբյանի վերաբերյալ 17.12.2020 թվականին կայացվել է թիվ 2727-Ա որոշումը 64.412.540 դրամ չկատարած հարկային պարտավորությունը գանձելու մասին, որը հիմք է հանդիսացել 11.01.2021թ. թիվ 040662 որոշման կայացման համար:

ՀՀ ՊԵԿ նախագահի 12.12.2022 թվականի թիվ 381 որոշմամբ 17.12.2020 թվականի թիվ 2727-Ա որոշումը մասնակի՝ 2013 թվականի հուլիս ամսից մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսների համար հաշվարկված պարտավորությունների մասով՝ 38.746.117 դրամի չափով (որից ապառք՝ 14.840.529 դրամ, տույժ՝ 9.261.659 դրամ, տուգանք՝ 14.643.929 դրամ) ճանաչվել է անվավեր:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի 20.01.2023թ. թիվ 2727-2-Ա որոշմամբ 17.12.2020թ. թիվ 2727-Ա որոշումը 2017, 2018, 2019թ. համար հաշվարկված 24.966.423 դրամ պարտավորությունների մասով ճանաչվել է մասնակի ուժը կորցրած:

Արդյունքում՝ 11.01.2021թ. թիվ 040662 որոշման հիմք հանդիսացած 17.12.2020 թվականի թիվ 2727-Ա որոշման շրջանակներում Միքայել Մնացականի Աղաբաբյանի չկատարած հարկային պարտավորությունը կազմում է 700.000 դրամ (2016թ. դեկտեմբեր ամսվա համար հաշվարկված պարտավորություն):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻՆՔ

11.01.2021 թվականին կայացված «ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 040662 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման «Որոշեցինք» մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Արգելանք դնել Միքայել Մնացականի Աղաբաբյան Ֆ/Ա-ի (ՀՎՀՀ՝ 40056978) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա 700.000 դրամի չափով:

Ա. Ենոքյան

Հ. Հակոբյան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ